

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ

ԱՐՁԱԳԱՆԳ


www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ



ԻԲ տարի (22-ամեակ)
2015-ի Տարեկան Բացառիկ

Բովանդակություն

Խօսք՝ Առաջնորդ Սրբազան Հօր	Էջ 3-4
Խօսք՝ Հովիւի եւ Հոգաբարձութեան	Էջ 5
Խօսք՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Տնօրէնութեան	Էջ 6-7
Նկարներ՝ Կիրակնօրեայի 2013-14 տարեշրջանէն	Էջ 8-14
Մեր Խօսքը	Էջ 15-16
www.sourphagop.org	Էջ 17
Հակիրճ Տեղեկութիւններ 2014-15 Տարեշրջանի Մասին	Էջ 18-20
Ձեռնարկներ եւ Արտադասարանային Աշխատանքներ՝ Ժամանակագրական Շարքով	Էջ 21
Աշակերտական Ներկայութեան Տախտակներ	Էջ 22
Կ...Կիրակնօրեայ Դպրոց	Էջ 23
2014-15 Տարեշրջանի Կազմը	Էջ 24



ԳԱՆԱՏԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ARMENIAN PRELACY OF CANADA
PRÉLATURE ARMÉNIENNE DU CANADA

Արժանապատիւ Տէր Գառնիկ Աւագ Քահանայ Գոյունեան
Հովիւ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ.
Երախտարժան Հոգաբարձուներ,
Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Վարժարանի Երախտագործ Դաստիարակներ,
Աշակերտներ, ծնողներ եւ հաւատացեալ հայորդիներ.

Հայրական սիրով եւ հոգեկան բերկրութեամբ, 15 Ապրիլ, 2015 թուակիր նամակով,
Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանի
վաստակաշատ Տեսուչ՝ Բարեշնորհ Թորոս Կիսասարկաւագ Պապիկեանէն իմացայ, որ
ընթացիկ տարուայ ամրան պիտի նշէք երեք կարեւոր տարեդարձներ՝

Կիրակնօրեայ Վարժարանի 35-Ամեակ,
«Մաշտոցի Արձագանգ»-ի 22-Ամեակ եւ
Կիրակնօրեայի Կայքէջի 15 ամեակ:

Բնականաբար այս բոլորը հպարտութիւն կը պատճառեն եւ պատասխանատու-
ներուդ, եւ մանաւանդ այն նուիրեալներուն, որոնք համախմբուած են Կիրակ-
նօրեային շուրջ եւ մեր ժողովուրդի զաւակներուն Քրիստոնէական Դաստիարա-
կութիւն ջամբելով, անոնց հոգեւոր սնունդ կը պարգեւեն:

Բոլորս ալ Կիրակնօրեաներու զաւակներ ենք եւ մեր առաջին ծանօթութիւնը Քրի-
ստոնէական հաւատքին ստացած ենք հոնկէ:

Այսօր երբ Սուրբ Յակոբի Կիրակնօրեան ուրախութեամբ կը պանծացնէ իր ա-
ռաքելութեան ճանապարհին սերմանած հատիկներու ծաղկման ու յաջողութեանց
բազմաթիւ յաջող հանգրուանները, կը մտածենք, որ պէտք է հպարտանալ տարուած
աշխատանքով, ո՛չ թէ որպէսզի ինքնագովութեան ախտին մէջ իյնանք, այլ՝ որպէսզի
ճշմարտութեան վկան դառնանք:

Արդարեւ, շնորհաւորական այս քանի մը տողերով, նախ կ'ուզենք գնահատել
Սուրբ Յակոբեան մեծ ընտանիքը, գլխաւորութեամբ Հովիւին եւ Հոգաբարձութեան,
որ բազմաճիւղ իր առաքելութեամբ, մշտապէ՛ս հպարտութիւն կ'առնէ իր հօտի բոլոր
զաւակներուն եւ Հայու արժանապատուութեան գիտակցութիւնը ունեցող
իւրաքանիւր անհատի:

Այս առիթով, բարձրօրէն կը գնահատենք մանաւանդ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ
Վարժարանի գեղեցիկ ներկայութիւնը, Սուրբ Յակոբեան վարդաստանին մէջ, որպէս
իւրապատուկ բուրմունքով զգլխող հաստատութիւն, յիշելով Առաքեալին բարի
մաղթանքները, որ ապականած եւ այլասերած մարդկութեան մէջ ապրող իր
սիրելիներուն կը մաղթէ, ըսելով. «Անոնց մէջ եղէք աստղերու պէս՝ որոնք կը փայլին
երկնականմարին վրայ, կեանքի պատգամը ամուր պահելով» (Փլպ 2.15-16):

Օրհնեա՛լ ըլլաք, դուք բոլորդ՝ ողջեր եւ ննջեցեալներ, որ 35 տարիներ առաջ, 1980
Սեպտեմբերին, օրուան Հովիւին՝ Արժանապատիւ Տէր Արմէն Աւագ Քահանայ

Իշխանեանին քաջալերանքով, բացիք դռները Կիրակնօրեայ Վարժարանին, որպէսզի մեր ժողովուրդի զաւակները գեղեցկանան Աստուծոյ Հոգիով, Քրիստոսի Հոգիով, Յաւիտենական, Ճշմարտութեան, Շնորհքի, Փառքի, եւ Կեանքի Հոգիով: Կը խոնարհիմ ձեր առջեւ, որովհետեւ ձեզմով՝ մեր զաւակները, զարգարուեցան Իմաստութեան, Յայտնութեան, Մխիթարութեան, Սրբութեան եւ Հաւատքի Հոգիով:

Օրհնեա՛լ ըլլաք, դուք բոլորդ, որ 1993 Դեկտեմբերին, 22 տարի առաջ, սկսաք հրատարակել «Մաշտոցի Արձագանգ»ը, իսկ 2000 Դեկտեմբերին, 15 տարիներ առաջ հրապարակեցիք ձեր Կայքէջը: Կը հաւատամ, որ ձեր այս նախաձեռնութիւններով, Սաբայի Թագուհիին նման, փոխանակ Դաւիթ Մարգարէին, մե՛ր ժողովուրդին ընծայեցիք կեանքի՝ խունկը, անկորնչելի ոսկին եւ անգին գոհարները:

Օրհնեա՛լ ըլլաք, դուք բոլորդ, եւ թող ձեր օրհներգական ծառայութիւնը ըլլայ յաւիտենական, որպէսզի Կիրակնօրեայ Վարժարանիդ յանձնուած մեր զաւակները վերարկուի պէս լոյս հագնին եւ երկինքի վտակներուն մօտ բոյն դնեն:

Երախտարժան Պարոն Տնօրէն, ուսուցիչներ եւ օգնականներ.

Կ'աղօթե՛մ, որ ձեր ջամբած դաստիարակութեամբ, մեր զաւակները ճնճղուկներու պէս բոյն դնեն Աստուծոյ Սուրբ Սեղանին քով, ինչպէս ծիծեռնակը հոն բոյն կը շինէ իր ձագերուն համար (Հմմտ Սղ 84.3):

Յարգելի ծնողներ.

Կ'աղօթե՛մ, որ Սուրբ Յակոբի Կիրակնօրեան, ձեր զաւակներուն սիրտը ցնծութեամբ լեցնէ, որպէսզի իրենց կեանքի բոլոր օրերուն անմահ Աստուածը օրհներգեն:


Սիրելի աշակերտներ.

Կ'աղօթե՛մ, որ սիրէ՛ք Աստուծոյ Սուրբ Տաճարը, ամբողջ հոգիով ցանկաք եւ փափաքիք բնակիլ անոր գաւիթներուն մէջ (Հմմտ Սղ 84.1), որպէսզի Աստուծոյ լոյսով լուսաւորուիք, Անով վահանաւորուիք, Անով շնորհք ու փառք ստանաք, երկնային բարիքներէն չզրկուիք եւ ամբիժ կեանք մը ապրիք (Հմմտ Սղ 84.11):

«Արդ, անոր՝ որ կրնայ ձեզ անկումներէ փրկել, պահել անարատ եւ անբիժ, եւ անխառն ուրախութեամբ լեցուն՝ իր փառաւոր ներկայութեան կանգնեցնել, միակ Աստուծոյն՝ որ մեր փրկիչն է՝ փառք տուէք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Անոր են փառքը, մեծութիւնը, պօրութիւնը ու իշխանութիւնը, թե՛ բոլոր ժամանակներէն առաջ, թե՛ գալիք բոլոր ժամանակներուն: Ամէն» (Յդ 24-25):

Միշտ Ձերդ

Ծառայաբար աղօթարար՝



ՄԵՂՐԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԻՔԵԱՆ

Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

1 Մայիս, 2015

Ազգային Առաջնորդարան

Մոնթրէալ - Գանատա.



ՄՈՒՐԱ ՅԱԿՈՒՐ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

Շաբաթ, 2 Մայիս 2015

Մոնրեալ

Սիրելի տնօրէնութիւն

Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի,

ուսուցչական կազմ,

ծնողներ եւ աշակերտ-աշակերտուհիներ,

Հայոց Յեղասպանութեան 100-ամեակն է, այսինքն՝ սկիզբը աւելի մեծ ու աւելի բազմաբնոյթ մարտահրաւէրներու:

100 տարիներէ ասդին, արմատախլուած ու տարագիր կեանքի մը մէջ ենք: Ի՞նչ ճիգեր եւ ի՞նչ զոհողութիւններ փորձած են ու կը շարունակեն փորձել մեր ընթացքը հայատրոփ պահել, համաձայն՝ Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ Թագաւորի, համաձայն՝ Սահակ Կաթողիկոսի, Մեսրոպ Մաշտոցի եւ Վռամշապուհ Թագաւորի, համաձայն՝ Քաջն Վարդանի եւ Ղեւոնդ Երէցի, համաձայն Յովհան Մանդակունիի եւ Վահան Մամիկոնեանի...

Հայոց Յեղասպանութիւնը մեզ խորապէս ցնցեց, եւ անոր վէրքը խորունկ է ու դեռ բաց: Բայց մենք կը հաւատանք, որ Տէրը պիտի բուժէ զայն, քանի որ արդարութեան մեր յոյսը Անո՛ր վրայ է: Անոր՝ որ իրեն յուսացողները ամօթով չի ձգեր: Եւ դեռ, մենք կը հաւատանք, որ Տէրը պիտի վերաշինէ մեր հոգիներուն Երուսաղէմը, պիտի ժողվէ հայութեան ցրուած զաւակները տան մէջ հայրենի: Ասիկա տեսիլքն է Ս. Յակոբի Կիրակնօրեայ Դպրոցին:

Արդ, այս տեսիլքին ծառայողները Աստուծոյ օրհնութեամբ թող վարձատրուին, ծնողները՝ քաջալերուին, եւ աշակերտ-աշակերտուհիներն ալ շնորհներով լեցուին:

Հաւագոյն մաղթանքներով՝

Հովհ. Ե. Հովսէփ Զոհրաբեան

Ս. ՅԱԿՈՒՐ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆՈՒՄ ԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ



Անթիլիաս, 8 Մայիս 2015

Յարգարժան տնօրեն, ուսուցիչներ, աշակերտներ եւ ծնողներ
Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցին
որ ի Մոնթրէալ, Գանատա

Սիրելիներ,

Ահա դարձեալ Մոնթրէալի Սուրբ Յակոբ եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցը տարի մը կը վաստակի իր ծառայական առաքելութեան մէջ: Տարի մը, որ աշակերտին ֆիզիքական աճման հետ նաեւ մտքի ու հաւատքի աճում պարգեւեց անոր, շարունակելու Հայ Ազգի գոյատեւման ու Հայ եկեղեցւոյ հաւատքի պահպանման իր արշաւը: Ահա տարեշրջան մը, որ նախորդ տարիներու վրայ հիմնուած, նոր տարիներու հիմքը դառնալու յոյս եւ հաւատք կը ներշնչէ մեզ:

Այսօր միատեղ կը տօնէք Սուրբ Յակոբ եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցին 35-րդ, անոր ամսաթերթ «Մաշտոցի Արձագանգ»ին 22-րդ եւ կայքէջ www.sourphagor.org-ին 15-րդ ամեակները:

Համաշխարհայնացած մեր առօրեային մէջ, շատ քիչ են այն անձերը որոնք իրենց խճողուած ժամերուն մէջ, ժամանակ կը տրամադրեն իրենց ազգային պատկանելիութեան ամրացման եւ իրենց հաւատքի ամրապնդման ու աճման: Մարդ կ'արժեւորուի իր ազգին ու իր հաւատքին նկատմամբ ունեցած նուիրուածութեան ու գիտակցութեան ընդմէջէն: Մարդ որքան ալ իմաստուն ըլլայ, որքան ալ աշխատասէր ըլլայ, նիւթական կամ այլապէս կարողութիւններ ունենայ, եթէ ոչինչով օգտակար կը դառնայ իր ազգին ու իր եկեղեցւոյ, ոչ մէկ ջանք կը թափէ իր ազգին պատիւ բերելու եւ իր հաւատքի տունը՝ եկեղեցին, պայծառացնելու, ան լոկ կը յարգուի ու կը յիշուի իր կեանքի կարճ ժամանակին մէջ եւ իր ազգին ու եկեղեցւոյ հետ իր անունը չանմահանար յաւիտենականութեան անսահման ժամանակին մէջ:

Ամէն ժամանակէ աւելի, Հայ Ազգը ու Հայ եկեղեցին այսօր պէտք ունի մեր նուիրումին, մեր զոհողութեան եւ մեր ծառայութեան:



Ահա 100 տարիներ անցան մեր ազգի վերածնունդին, որոնք պատրաստեցին մեզ նոր ամեակներու ընթացքին իմաստութեամբ ու միասնականութեան տիրանալու մեր բռնագրաւուած իրաւունքներուն:

Թող որ մեր Սուրբ Նահատակներուն բարեխօսութեամբ զօրանանք եւ Աստուծոյ առաջնորդութեամբ շարունակենք մեր պահանջատիրութիւնը: Թող որ մեր Սուրբ Նահատակներու կրած չարչարանքներու ու տարապանքներուն բաւասանները դառնանք մեր ազգին ու եկեղեցւոյ հանդէպ մեր ունեցած գիտակցութեամբ ու նուիրումով: Այն ատեն մենք պիտի արժանապէս կոչուինք զաւակները 1.5 միլիոն նահատակ սուրբերուն:

Առ այդ, ընդունեցէք իմ խորին շնորհաւորութիւններս Սոնթրէալի Սուրբ Յակոբ եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցին նշած երեք կարելոր ամեակներուն առիթով, քաջ գիտնալով թէ Կիրակնօրեայ Դպրոցներուն մէջ է, որ ամբողջութեամբ հայ զաւակը լիակատար պիտի աճի ազգային եւ եկեղեցական վառ ապրումներով ու գիտակցութեամբ:

Կ'աղօթեմ առ Բարձրեալն Աստուած, որ իր հովանիին տակ պահէ Հայ եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցը, օրհնէ անոր նուիրեալ տնօրէններն ու ուսուցիչները, պահէ ու պաշտպանէ անոր աշակերտութիւնը, որուն նուիրուած ենք մենք բոլորս՝ Վարիչ Տնօրէն, տնօրէնութիւն եւ ուսուցչական կազմ: Հայ ընտանիքը ամուր պահէ եւ Իր Սուրբ Աջը անոր հովանի դարձնէ:

Կիրակնօրեայ դպրոցի իւրաքանչիւր աշակերտի ժպիտը եւ ուրախութիւնը ձօն, ձեր բոլորին յաջողութեան եւ յառաջդիմութեան:

Աղօթարար

Ղեւոնդ Վրդ. Բենդեթեան
Վարիչ Տնօրէն Հայ եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու

ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2014-15 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



Բողբոջ-Կոկոն Դասարան



Ծաղիկ դասարան



Նախակրթարան Ա. և Բ. դասարաններ




Նախակրթարան Գ. և Դ. դասարաններ




Նախակրթարան Ե. և Զ. դասարաններ



Երկրորդական Ա. դասարան



Երկրորդական Բ. և Գ. դասարաններ



Երկրորդական Դ. դասարան (Օգնականներ)

ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2014-15 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2014-15 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2014-15 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ ամբողջացնել մեր 35-րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 22-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ անցեալ Սուրբ Յակոբի տօնին օրը՝ Դեկտեմբեր 2014-ին մեր կայքէջին՝ www.sourphagop.org-ին 14-րդ տարեդարձն էր:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը փսայ հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները որոնց մանուկները արգելքներ ունին երթալու Յիսուսին, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

Մեծ Եղեռնի 100-ամեակ

2015 թուականը 100-ամեակն էր Մեծ Եղեռնին: Ամբողջ հայութիւնը մէկ մարդու պէս ոտքի կանգնեցաւ եւ իւրաքանչիւր հայ յայտարարեց «Կը յիշեմ եւ կը պահանջեմ»: Մենք, մեր Կիրակնօրեայ Դպրոցին մէջ կը յիշեցնենք մեր աշակերտներուն թէ Մեծ Եղեռնի սրբացեալ նահատակներուն անմահ յիշատակը կրնանք յարգել նաեւ՝

- . Ապրելով Հայադրոշմ կեանք մը,
- . Վառ պահելով հայաստանեայց եկեղեցւոյ տօներն ու ազգային աւանդութիւնները,
- . Լսելով, մտիկ ընելով ու երգելով մեր Հայանուագ շարականներն ու երգերը,
- . Ամուր կառչած փսալով մեր հայավայել բարի բարքերուն ու սովորութիւններուն
- . Կարդալով ու կեանքի վերածելով մեր հայագրեալ Աստուածաշունչը եւ մանաւանդ ՄԻՐԵԼՈՎ Հայր ամբողջ տարուան ընթացքին:

Եւ այս բոլորը կարենալ ընելու համար մենք պէտք է քաջատեղեակ ըլլանք արդէն չորս հազարամեայ հայոց պատմութեան: Մենք մեր Կիրակնօրեայ Դպրոցին մէջ կը սորվինք թէ մենք մեր ծնած ու մեծցած քաղաքներուն մէջ, Հայ Քրիստոնէայ ապրելու մեր իրաւունքը շահած ենք.

- ա. Թաղեռու եւ Բարթոլոմէոս Առաքեալներու նահատակութեամբ
- բ. Սուրբ Գրիգոր Լուսաւորչի չարչարանքներով
- գ. Սահակ-Մեսրոպ-Վոսմշապուհի իմաստութեամբ, երազով եւ քրտինքով,
- դ. Աւարայրի հերոսներու արիւնով եւ
- ե. Նուարսակի Դաշնագրի ստորագրութեամբ:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Ասկէ 86 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, Յիսուսի այս խօսքը որպէս նշանաբան ունենալով մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն եւ Քրիստոսի խօսքով կը սաստէր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

www.sourphagop.org-ը 14 տարեկան

Մեր այս տարուան դպրոցական տարեշրջանի ընթացքին մեր կայքէջը տօնեց իր 14-ամեակը եւ շարունակեց ծաւալիլ: Մանրամասնութիւնները կը գտնէք էջ 17-ի վրայ:

«Մաշտոցի Արձագանգ»ի 22-ամեակ

Մեր այս դպրոցական տարուան ընթացքին հրատարակեցինք նաեւ մեր ամսաթերթը 21-րդ տարին ըլլալով եւ մեր կայքէջին ծաւալումով, ծաւալեցաւ նաեւ մեր ամսաթերթի կարդացողներուն թիւը: «Մաշտոցի Արձագանգ»-ի միջոցաւ, այս տարի եւս արեւմտահայերէնով 176 քրիստոնէական դաստիարակութիւն ջամբող էջեր աւելցուցինք համացանցին վրայ:

Աշակերտութեան թիւ

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը թեթեւ յառաջխաղացք արձանագրեց 54-էն 60-ի բարձրանալով: Իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնը 38-էն 40-ի բարձրացաւ: Այս տարուան ընթացքին մեր երկրորդական Դօգմականներու խումբը յոյս կը ներշնչէ մեզի ապագայի նկատմամբ:

Երգերու եւ Շարականներու ուսուցում

Այս տարի եւս շարունակեցինք երգերու եւ շարականներու ուսուցումը, որ աւելիով հարստացուց մեր Կիրակնօրեայ Դպրոցի ծրագիրը: Կը յուսանք որ տարուէ տարի մեր աշակերտութեան սերը՝ հանդէպ մեր շարականներուն աւելիով ծաղկի, եւ անոնք ամբողջացնեն իրենց Հայ եկեղեցւոյ գիտելիքները:

Աստուծոյ կամքով՝ մեր 36րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին՝ որ այս տարի Սեպտեմբեր 13, 2015-ին է: Մինչ այդ, բարի արձակուրդ կը մաղթենք ձեզի:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

www.sourphagop.org

Մեր կայքէջը համացանցի վրայ իր ներկայութեան 15-րդ տարին մտաւ 2014-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ճոխացուցինք անոր բովանդակութիւնը: Մեր կայքէջին գրքերու բաժնին մէջ կը գտնուէք:

Ազգապատում (Ա. Բ. եւ Գ. հատորներ), Ժամագիրք, Սբ. Պատարագ, Կրօնական Գիտելիքներ, Պատարագամատոյց եւ Քրիստոնեայ Հայաստան հատորներ:

Աւելցուցինք նաեւ երգերու եւ շարականներու բաժին մը ուր կը գտնուենք մեր Կիրակնօրեայ Դպրոցին մէջ սորված երգերը:

Անշուշտ մեր կայքէջին վրայ նաեւ գտնուեցինք «Մաշտոցի Արձագանգ»-ի բոլոր թիւերը:

Ինչպէս կը տեսնուէք, մեր կայքէջին ենթաբաժանումներն են.

Մեր մասին, Լրահոս, Սուրբեր, Տօներ, Գիրքեր, Ժամանակացոյց, Մաշտոցի Արձագանգ, Կապեր, Events, Survey, Blog, Armenian Font, Gallery.



ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

2014-2015 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Առաքելական Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

35-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2014-15 տարեշրջանը 35-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին՝ 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 34-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Իւրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեւէ մինչեւ Մայիսի 3-րդ Կիրակին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-1:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտէզի 3, նախակրթարանի 6 դասարաններ ինչպէս նաեւ երկրորդականի 4 դասարաններ, որոնք գործեցին 8 խմբաւորութիւնով:

22-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2014-15 տարեշրջանի ընթացքին նաեւ հրատարակեցինք, 22-րդ տարին ըլլալով, մեր պարբերաթերթ, «Մաշտոցի Արձագանգ»ը՝ ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ
http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ էջին վրայէն:

14-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2014-5 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 60 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 40՝ բաժնուած 8 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2014-15 տարեշրջանին ունեցանք 7 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողոք եւ Կոկոն

Ծաղիկ

Նախակրթարան Ա. եւ Բ.

Նախակրթարան Գ. եւ Դ.

Նախակրթարան Ե. եւ Զ.

Երկր. Ա.

Երկրորդական Բ. եւ Գ.

Դաստիարակ

Թամար Գիզիրեան,

Օգնական՝ Ռիթա Խշխշեան

Թամար Գիզիրեան

Թալին Բարսեղեան

Յասմիկ Նաճարեան

Շողիկ Նաճարեան

Թորոս Պապիկեան

Առէն Պապիկեան

Օգնական՝ Միւր Պանքեան

Երգերու եւ շարականներու ուսուցում

Վաչէ-Սազո Պոյաճեան՝ Ծաղիկ, Նախակրթարան եւ Երկրորդական Օգնական Բասգալ Տեմերճեան

«Մաշտոցի Արձագանգ»

Թորոս Պապիկեան

Տնօրէն եւ Կայքէջի պատասխանատու

Թորոս Պապիկեան

Օգնականներ՝ Արշակ Խշխշեան եւ Սեւակ Պապիկեան

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներ եւ այլ նիւթեր:

Սկիզբ	Վերջ	Բողոք-Կոկոն	Ծաղիկ	Նախ. Ա. եւ Բ.	Նախ. Գ. եւ Դ.	Նախ. Ե. եւ Զ.	Երկր. Ա.	Երկր. Բ. եւ Գ.	Երկր. Դ.
10:30	11:00	Հ Ա Ի Ա Ք							
11:00	11:08	Հայր Մեր, Մաղթանքներ, Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգ							
11:10	11:45	Լսարանային			Երգեցողութիւն		Լսարանային		Օգնական
11:47	12:22	Ձեռային	Երգեցողութիւն		Լսարանային		Դաս.	Դաս.	Օգնական
12:25	13:00	Դաս.	Դաս.	Դաս.	Դաս.	Դաս.	Երգեցողութիւն		Օգնական
13:02	13:10	Կեցցէ՛ մեր Կիրակնօրեայ Վարժարան - Մասն եւ բաժին եղիցի սուրբ պատարագիս							

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2014-15 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան 3 խումբերու.

ա. Մանկապարտեզի Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ ու Նախակրթարանի Ա եւ Բ. դասարանները

բ. Նախակրթարանի Գ., Դ., Ե. եւ Զ. դասարանները

գ. Երկրորդական:

Պահը ընթացաւ հետեւեալ ձեւով.

Ոսկեղէն համարներու կամ Մաղմոսներու ուսուցում
Բարոյալից պատմուածքներու ներկայացում
Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
«Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:

Դասարանային բաժին


Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:




ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

14 Սեպտեմբեր 2014	Տարեսկիզբ եւ վերամուտ:
21 Սեպտեմբեր 2014	Վարժարանի աշակերտությունը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդություն ստացաւ:
11 Հոկտեմբեր 2014	Թարգմանչաց տօնի յատուկ յայտագիր:
15 Դեկտեմբեր 2014	Վարժարանի աշակերտությունը գեղարուեստական յայտագրով մասնակցեցաւ Ս. Յակոբի անուանակոչութեան ամանդական ճաշկերոյթին:
28 Դեկտեմբեր 2014	Ամանորի եւ Սուրբ Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով:
15 Փետրուար 2015	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն :
21 Փետրուար 2015	Դպրոցի Տնօրէնութիւնը, Ուսուցչական կազմը եւ օգնականները միասնաբար ստանձնեցին Հայ Եկեղեցւոյ Տաղաւարի պատասխանատւութիւնը Ազգային Առաջնորդարանի կազմակերպած Մանկական Դ. Փառատօնին ընթացքին: Հոն ներկայացուեցան Կիրակնօրեայի Կայքէջը, «Մաշտոցի Արձագանգ»ը, Հայ Եկեղեցւոյ մասին ծանօթութիւններ, Հայկական Խաչի ձեռային աշխատանք, Կիրակնօրեայ Դպրոցի մանկական պահքը, եւ բաժնուեցան անմոռուկի ժամանակաւոր դաջուածքներ (tattoo):
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կազային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հաւկիթ
29 Մարտ 2015	Դպրոցը փակ էր Ծաղկազարդի առիթով:
5 Ապրիլ 2015	Դպրոցը փակ էր Ս. Յարութեան տօնին առիթով:
17 Մայիս 2015	Ամալերջի Հանդէս:

Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2014 - 2015 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրություն և միջին ներկայություն



2014-2015 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայություն



Կ... Կիրականօրեայ
Դպրոց

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ **ԻԲ. ՏԱՐԻ**

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի
ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցին վրայ
www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի
2014-15 տարեշրջանի կազմը

Առէն Պապիկեան
Թամար Գիզիրեան
Յասմիկ Նաճարեան
Շողիկ Նաճարեան
Թալին Բարսեղեան
Վաչէ-Սագօ Պոյաճեան
Թորոս Պապիկեան